ԺԹ. — Այս աստընվորիս վերա ես բերեմ քեզ բան մի վրկայ
Բերես երեւան հանես դու արնին ասեմ թէ ու կայ:
Ի. — Զայդ իրդ որ ի յափդ ունիս ու կ'ուզես որ դու գիս փորձես
Հրլուն ես գիտակ եղայ որ յափիդ միջին կու պահես:
ԻԱ. — Գրղինձ է զոր գաղտ պահես ես կանուխ ըզինքն իմացա
Զմատունքդ ի յառաջ պարզէ ու զամէն դու յայտնի ասա:
ԻԲ. — Զապիկիդ ի յափդ ունիս ու ասես թէ ոք չըգիտէ
Ասեմ ու յայտնի առնեմ որ ասես թէ լաւ կու գիտէ:
ԻԳ. — Զոսկիդ ես ի յափդ առեր ու չինէն ի գաղտ կու պահես
Հետ այտոր ով շատ դատէր, նա յետոյ ի վայր մընացեր:
ԻԴ. — Թ ապաշխարութիւն ուզես ու կամիս դու կարգ մի յաւշել(?)
Բուռիկ մի բրդիկ ունիս ու կամիս ջուխեկ մի շինել:
ԻԵ. — Իրքուկ մի դրծար ունիս ի յափիդ միջին թէ գիտես
Զու է քո յափիդ միջին որ յայնտեղրն զինք կու պահես:
ԻԶ. — Աղբ ես ի ծեռքդ առեր, մի' պահեր շուտով մի ծրգէ'
Գիտեմ որ հոտեր է ինքն, որ ոչ ով յափրն չի պահէ:
ԻԷ. — Արծաթ է ափիդ միջին շատ հարկիս է քեզ թէ գիտես
Մուրվաթ աւելի է քո թէ հանես ու մեզ ցուցանես:
ԻԸ. — Իրքունք մի ունիս առ քեզ ու ասես թէ զինքս ինչ ասա,
Սապոն է ի քո ափիդ, ես շուտով զինքդդ իմացայ:
ԻԹ. — Այդ խոտ է ի քո ծեռացդ որ յերկրէ է ինքդ բուսած
Զրգէ զինքն ի քո ծեռացդ ի ծորերրն շատ է հնծած:
Լ. — Մատանիդ ի յափդ ունիս այդ նըշան է Սողոմոնի
Եմ բեր ու ցըցու ինձի որ ասեմ ըզիւր արմընցի:
ԼԱ. — Զայդ իրդ որ պահել ջանաս այդ երկաթ է հան երեւան,
Կարծես թէ դուն մէն ունիս, զայդ ունի ամէն շինական:

Հրատ. Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ

ՏՈ՛Ւ ՄԵԶԻ ՏԷՐ...

Տո՛ւր, մեզի Տէ՛r, մեր տունն ու տեղ, վառ օճախը պապենական,
Ուր բարձրանայ ծուխը թոնրին՝ երդիկներէն՝ պալան-պալան...
Եւ մանուկը առաջին հեղ բանայ շուրթերն իr վարդերանգ:

Տո՛ւr, մեզի Տէ՛r, աղօթքն ու խունկն, անուշաբոյr, երեմական...
Աղօթելով գէթ մոռանանք մեr ցաւերը՝ «վեց հազարեան»...
Ու դաշտն հերկէ մըտակը ժիr, իr հայրենի արեւին տակ...:

Տո՛ւr, մեզի Տէ՛r, երկինքն անամպ ու լիները մեr կապուտան,
Ազատ-անվախ դաշտերուն մէջ մեr մանուկները միշտ խայտան,
Ու երկարի կեանքը անոնց զերդ արիի վազք մը կանանչ:

Տո՛ւr, մեզի Տէ՛r, մեr սուրբ հողը արեւալոյս՝ հայրենական...:

Ամման
(Անդրյորդանան)

ԳՕՇԱՐ